## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-26/2.1

Ջրվեժ «03» 03 2026թ.

Ջրվեժի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻ ԷՄ ԲԻ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Լևոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է .

Չափաբաժին 1: Ջրվեժ համայնքի կարիքների համար ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և խորհրդատվական ծառայություններ,

Չափաբաժին 3: Ջրվեժ համայնքի կարիքների համար համայնքային ուսումնամշակութային զարգացման կենտրոնի շենքի գազատարի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ,

Չափաբաժին 4: Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի կարիքների համար Լուսավորության փողոցի մի մասի մայթի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցում:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8 500 000 (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից չափաբաժին 1՝ 7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, չափաբաժին 3՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, չափաբաժին 4՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով։ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր

է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[1]

---

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
գ. Ջրվեժ, Մելքոնյան-76
ՀՎՀՀ 03546091
ՀՀ ֆինանսների նախարարության ԿԳ
Հ/Հ 900102001691
Հ/Հ 900102000644
Հ/Հ 900102001691

________ Ն.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ջի Էմ Բի Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ,
Չարենցի 87/2
ՀՎՀՀ 03306213
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570066828580100

________ Լ. ԼԵՎՈՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«03» 03 2026թ. կնքված
ԿՄՁՀ-ԳՀԾՁԲ-26/2.1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71221200/1 | Ջրվեժ համայնքի կարիքների համար ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ /տես ստորև/ | դրամ | 7 800 000 | 1 | Ջրվեժ համայնք | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 3 | 71221200/3 | Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի համայնքային ուսումնամշակութային զարգացման կենտրոնի շենքի գազատարի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ /տես ստորև/ | դրամ | 200 000 | 1 | Ջրվեժ համայնք | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 4 | 71221200/4 | Ջրվեժ համայնք Ձորաղբյուր գյուղի կարիքների համար Լուսավորության փողոցի մի մասի մայթի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցում /տես ստորև/ | դրամ | 500 000 | 1 | Ջրվեժ համայնք | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ | «Ջի Էմ Բի Գրուպ» ՍՊԸ |
| գ. Ջրվեժ, Մելքոնյան-76 | ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Չարենցի 87/2 |
| ՀՎՀՀ 03546091 | ՀՎՀՀ 03306213 |
| ՀՀ ֆինանսների նախարարության ԿԳ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900102001691 | Հ/Հ 1570066828580100 |
| Հ/Հ 900102000644 | |
| Հ/Հ 900102001691 | |
| _________ Ն.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ | _________ Լ. ԼԵՎՈՆՅԱՆ |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Չափաբաժին 1

Ջրվեժ համայնքի կարիքների համար ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման

| Փողոցների անվանումը | Փողոցների երկարությունը (մ) | Նախատեսվող ասֆալտապատման լայնությունը (մ) | Լրացուցիչ |
|---|---|---|---|
| **Ջրվեժ բնակավայր** | | | |
| 36-րդ փողոց | 450 | 6-7 | |
| 5-րդ թաղամաս, 1-ին փողոց | 640 | 5-7 | |
| 3-թաղամաս, 10-րդ փողոց | 850 | 5-7 | |
| **Ձորաղբյուր բնակավայր** | | | |
| Բարեկամության փողոց 1-ին նրբանցք | 150 | 4-7 | |
| Ամառանոցային փողոց Այգիների նրբանցքից դեպի այգեգործական զանգված տանող հատված | 640 | 6-7 | Անհրաժեշտ է իրականացնել ջրահեռացման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում |
| այգեգործական զանգվածի 171, 172, 173 թաղամասերին հարող հատված | 790 | 6-7 | |
| Ջրվեժ գ. 5-րդ թաղ. 1-ին փողոցից դեպի Ձորաղբյուր գյուղի այգեգործական զանգված տանող հատված | 500 | 5-7 | |
| **Ձովք բնակավայր** | | | |
| 1-ին փողոց | 355 | 4-6 | |
| 3-ին փողոց | 170 | 5-7 | |
| 4-ին փողոց | 225 | 5-7 | |
| 5-ին փողոց | 355 | 5-7 | |
| 6-ին փողոց 2-րդ նրբանցք | 270 | 5-7 | |

**Անհրաժեշտության դեպքում նախատեսել մայթերի կառուցում, համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:**

**Նախագիծը մշակել համաձայն ներքոգրյալ ցանկի**

1. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն;
2. Նախագիծը ներկայացնել 3 օրինակից,
3. Աղյուսակում նշված յուրաքանչյուր կետի համար կազմել առանձին նախահաշիվ և ներկայացնել մեկ փաթեթով;
4. Նախագծման ընթացիկ աշխատանքերն աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ;
5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Ջրվեժի համայնքապետարանի հետ;
6. Ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

7. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, շինարարական աշխատանքների համար կազմել ծավալաթերթ-նախահաշիվ;
8. Նախագծի համաձայնեցումները շահագրգիռ կազմակերպությունների հետ;
9. Նախագիծը և նախահաշիվը ներկայացնել էլեկտրոնային կրիչով;
10. Շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմվում է «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան;
11. Ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը;
12. Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:
13. Նախագիծը ներկայացվում է ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությամբ:

**Նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթը պատվիրատուին պետք է հանձնվեն հետևյալ տեսքով՝**

1. Ուղեգծի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ և գեոլոգիա
2. Ընդհանուր բացատրագիր
3. Ինժեներական /ներքին և արտաքին/ լուծումներ /գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր/
4. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ
5. Շինարարության կազմակերպման նախագիծ
6. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ
7. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ
8. Ներկայացնել տեղանքի հանույթ /գեոդեզիա /:

* Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AutoCAD և PDF տարբերակներով, նախահաշիվը և ծավալաթերթը (ներկայացնել նաև կշիռներով) ՝ EXCEL տարբերակով հայերեն և ռուսերեն լեզուներով:

**Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ**

- ճարտարապետահատակագծային առաջադրանք և տեխնիկական պայմաններ,
- ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն,
- նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),
- ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, մշակույթ, արտակարգ իրավիճակներ):

Տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծի մշակման ընթացքում ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թվականի դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված ՀՀ մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցով և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.06.2022թ N12-Ն հրամանով հաստատված «Տարածքների բարեկարգում» շինարարական նորմերով:

**Նախագծման փուլերը**

**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում**՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն

Նախագծային աշխատանքների իրականացում

**«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** փուլերով (այդ թվում՝ **Էսքիզային նախագիծ**՝ ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով)

**Նախագծի համաձայնեցումը**

1. **Համայնքի ղեկավարի,**
2. **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,**

Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման ապահովում բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմնի հետ:

Նախագիծը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ պետական լիազոր մարմինների հետ (Շրջակա միջավայրի նախարարության և այլն) ըստ անհրաժեշտության:

**Նախագծման փուլը, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջները**

Աշխատանքային նախագիծ

•Նախագծանախահաշվային փաստաթղթերը ՀՀՇՆ IV-11.05.02-99

Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներիշինարարական նորմերի պահանջների համապատասխան.

•Հետազննումը՝ ՀՀՇՆ 1-2.01-99 նորմերի և ГОСТ 32836-2014-ի պահանջների համապատասխան,

•Նախահաշիվը՝ ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան,

•Նախագիծը՝ համաձայն ГОСТ 21.511-83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի.

•Կահավորումը՝ ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի թիվ 113-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:

- <Քաղաքաշինության մասին> օրենք
- Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> **N 263-Ն հրաման**,
- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 526-Ն որոշման Կարգի** 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ
- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> **N596-Ն որոշում**

**Այլ պահանջներ**

Նախագծման ընթացքում, նախագծման առաջադրանքում կարող են մտցվել մասնակի փոփոխություններ և ճշտումներ:

Նախագիծը փորձաքննության ներկայացնում է պատվիրատուն:

**Նախագծային փաստաթղթերը կընդունվեն պատվիրատուի կողմից միայն բոլոր անհրաժեշտ համաձայնեցումների և փորձաքննությունների դրական եզրակացության առկայության դեպքում:**

Նախագիծը պետք է համապատասխանի նախագծման առաջադրանքին ու ՀՀ տարածքում գործող շինարարական նախագծման նորմերին և կանոններին:

Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ տարածքում գործող աշխատանքային գծագրերին ներկայացվող ստանդարտներին համապատասխան:

***<u>Եզրակացություններ</u>***

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում

**Նախագծողի կողմից** ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների ձեռքբերում

**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)**

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ **30 օրացուցային օր**:

**<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>**

